

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ



այ ժողովուրդը, Սովետական
Միարյան երայրական ժողո-
վուրդների հետ միասին, մեծ
խանդավառությամբ նոյնարդեցի

7-ին տոնեց Հոկտեմբերյան Սոցիալիստա-
կան Մեծ ուղղուցիչայի 31-րդ տարեդարձը:

Անցած 31 փառապան տարիների ընթաց-
քում Սովետական անձայրածիր երկիրը ան-
հանաշելիութեն կերպարանափոխվել է. նա
հսկայարակ անել, զարգացել ու վերածվել է
ամենաառաջավոր կուլտուրայի, գիտության
և հզոր տեխնիկայի երկիր:

Այսօր, երբ եվրոպական շատ երկնեւ
տեսական տագնապի ճիրանեներում գա-
լարվելով իրենց աղերսալից հայացքներն են
ուղղում անդրօվկիանոսյան նդիքացած դր-
լարատերերին, երանցից փշրանքներ մուրա-
լու, օգնություն ստանալու մին հույսերով,
Սովետական գերեզոր Միուրյունը, իր աննը-
կուն ժողովրդի անձնութաց ու հերոսական
աշխատանքի վրա կորնած, առանց դրսի
օգնության, ոչ միայն բուժել է պատերազմի
հասցեած շատ վերելու, այլ և ստեղծել է
այնպիսի առատություն, որը գերազանցելով
հայապատերազմյանին, լիակատար կերպով
ապահովամ է սովետական երշանիկ ժողո-
վրդի բարօր կյանքը:

Եվ մինչեւ մեր մեծ հայրենիքը՝ Սովե-
տական Միուրյունը տեսական ու կապու-
րական հախուտն վերելիք է ապրում, օվկիա-
նոսի մյուս կողմում տեսական մոռալուա
նգնածամի ուրվականը հանգիստ չի տալիս
ամերիկյան դոլարու կրատիստայի ախրանշակ
հերոսներին. Երանք, պատերազմի, հավերժ
նըսկի արժանի, այդ շահակիրեները իրենց
միակ փրկությունը տեսնում են միայն հա-
մաշխարհային նորանոր սպանդների կազ-

մակերպման մեջ, որի համար էլ անընդհատ
զինվում ու զինում են իրենց մեծ ու փոքր
սատելիտներին. Ասկայն, պատերազմի հրա-
հրման այդ անզուսպ ուժերը բախվում են
խաղաղության վիրխարի ուժերի հետ, որոնց
զիավարում է Սովետական Միուրյունը: Մեծ
վերելիքի ուղիով աեշեղորեն բերացոլ հզոր
Սովետական Միուրյունը հանդիսանում է
խաղաղության անխոցելի ու անառիկ միջնա-
րեզը, որի աշտարակների վրա հպարտուեն
ծածանվում են ժողովուրդների համերաշխ
գործակության ու խաղաղության հարա-
կան դրշները. ողջ աշխարհի պրոգրեսիվ
ու խաղաղատենչ մարդկության հայացքներն
այսօր ուղղված են խաղաղության այդ ամ-
րակու միջնաբերդին:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ու-
ղուցիչան բախուռոջ դեր խաղաց Ռուսա-
տական ժողովուրդների կյանքում—սկիզբ ուր-
վեց ցարական անազգ բռնատիրության հա-
պանեներից ազատագրված ժողովուրդների
անխախտ դաշինքի, սերտ համազործակցու-
թյան և երայրական համերաշխ ու հզոր
միասնական մի բռնահիմում համայնքվե-
լուն. այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը
լայն հնարավորություններ ստացալ կու-
տուրական և տեսական անման ու զար-
գացման համար:

Սովետական ժողովուրդների երայրական
այդ ընտանիքի իրավահավասար անդամնե-
րից մեկը հանդիսանում է նայ ժողովուրդը,
որն իր այսօվա բերկրալից կյանքը ձեռք է
բերել Հոկտեմբերյան ուղղուցիչայի մեծա-
գոյն նվաճումների շնորհիվ:

Հայ ժողովուրդը անուն երախտագիտու-
թյամբ ու անսահման ցնծությամբ նոյնա-
բերդի 29-ին տանեց նաև իր ազատագրու-

րյան, իր Փրկության ու վերածնության մեծ տոնք՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 28-րդ տարեդարձը:

28 տարի առաջ, դաշնակների տիրահեռակա տիրապետության օրով Հայաստանը վերածվել էր զուլումի, արյան ու ավերի, սրտամունք ողբի ու դառնաղի արցունիքի, միացող մոխրակույտերի ու լեռնացած դիակույտերի, սովալլուկ գաղրականների ու անօգուրերի և բիշա, վայրագ կամայականությունների ու մասուցերի նողկալի տիրապետության երկրի հայի բուռու արյունով էին ներկվել հայրենի հարազատ լեռն ու գետեր, սարալաշերն ու լեռնածերպերը, անհերկ մեացած դաշտերն ու անդախուր ձորերը: Կտանքի տակ էր դրվել մի բուռ հայ ժողովրդի փիզիկական զոյուրյունը— հայի արյան ծարավ բուր վահրամները սպառնում էին խպատ բնաշնչել ողջ մեացած հայուրյան բնուրեները:

Ստեղծված այս գեհենից փրկվելու համար հայ բազարի ժողովուրդը արեաների ու նոշոտված Լեռնահայաստանի վրա ապստամբության ալ դրու պարզեց և ուստ ազերի ու մեծ ժողովրդի ու հայրական հարմիր Բանակի եղբայրական օգնությամբ 1920 թվի նոյեմբերի 29-ին, ընդմիշտ փշրելով դաշնակների անարգ լուծը, սովետական կարգեր հաստատեց Երկուում:

Անցել է այդ հավերժակիշատակ օրվանից արդեն 28 տարի: Երիտասարդ, առնական Սովետական Հայաստանը անել, զարգացել ու դարձել է Սովետական Միուրյան առաջավոր ուսուպութիւններից մեկը: 28 հոյակապ տարիների ընթացքում աննանաշելիութեն փոխվել է Հայաստանի դեմքը. նա վերածվել է կուլտուրայի ու գիտության աննախճարաց ծաղկման մեծագույն օշախի և առաջապար արդյունաբերության ու մեթենայացված զյուղատնտեսության բուռ վերել ապրու երկրի: Խախիկին «մայրագյուղ» Երևանը ծավալվել, բնադաշակվել, փրրել ու դարձել է այսօր Սովետական Միուրյան զեղասեխի, հոյակերտ ու ինդուստրիալ հաղաներից և գիտության ու արվեստի կարեւորագույն օշախներից մեկը: Եվ ոչ միայն Երևանը, այլ և ողջ Հայաստանը կերպարանափոխվել է նոր ու խնդուն տեսք է ընդունել:

Երե մի պահ համեմատենի Հայաստանի հախասովետական և նոր բարտեզը, ապա կտեսնենք, որ հայ բանաշան ժողովրդի ստեղծագործ ու շինուաց աշխատանքի, եթ-

պատակասալաց ու կուռ կամքի, անսպառ եռանդի և ներոսական ու անխոնջ ջանքերի շնորհիվ մեծ շափերով փոխվել ու փոխվում է անընդհատ հայրենի երկրի աշխարհագրական դեմքը: Նոր բարտեզը ծածկվել և շարունակում է ծածկվել բազմաթիվ ու բազմապիսի պայմանական հշաներով ու գծերով, որոնք նանդիսանում են վիրխարի մտահղացուների կենսագործման և հայ ժողովրդի բարեկեցիկ ու երշանիկ կյանքի կերտման խոսուն վկաները: Պայմանական այդ պարզ նշաններից ամեն մեկի տակ բազմված է սովետական մարդկանց բարոյա-ֆիզիկական ուժերի գերարման, խիզախ մտի մեծ քրիչքների, շլուտ մկանների պրիման, աշխատանքային աննման սխրագործությունների և բնուրյան անուի ուժերի հաղթահարման երշանիկությամբ լեցուն սրտերի ներսուական պատմությունը: Դրանք, այդ նըշանները պատմում են այն մասին, թե ինչպիսի վայրերում հաղթանակութեն վեց են խոյացել զեղեցկակառուց զյուլերն ու բարաքները, ստեղծվել ինդուստրիալ օջախները, անջրդի ու խոպան տափաստանները ծածկվել շրանցեների խիս ցանցով, շորացվել նահնուտները, էլեկտրալուսներով ողողվել զյուլ ու բաղամ, դաշտերը ծածկվել հացառատ ալեծուփ արտերով, բամբակի բերաշատ պլաստացիաներով, մրգաշատ փարբամ այզիներով: Պատմում են այն մասին, թե ինչպիս լեռների ծոցում ստեղսական պահվող ու իննալանշերին արագորեն հայտնվող բարեկարգ նախապարհները մեկ մազցում են լեռն ի վեր, մեկ զահավիժունն սլանում խոր կիրեների առափելա ծայուերի վրայից, իսկ հարյուրավոր գործարանների երկնանուած ծխնելույզները Հայաստանի բարձրակատար լեռներին միախառնվելով մի նոր բովշուրյուն հաղորդում նաև վեհատեսիլ բնուրյան նկարչագեղ պեյզաժին: Պատմում են և այն մասին, թե ինչպիս լեռնահայաստանի բնուրյան շնաշխարհիկ բագութին՝ Սևան գանձաշատ լիճը, դաշեր շարունակ բարձրագան լեռների ամուռ զրկում նիրենելուց հետո, այսօր, սովետական դարաշշանում իր անսպառ էներգիան ի սպաս է դրել հայրենի աշխարհի ծաղկող ժողովրդատնտեսությանը: Սևանն այսօր ոչ խոլ հակաների կողմից գերված շնառ զեղեցկուի է, և ոչ էլ վիրխարի լեռների կատարին պարզած, նայոց անույշ զինուուն լեցուն, կենաց մի բաս, այլ նա համակ


կյանք է, հուժկու մի ուժ, գաճարի անսպառ շտեմարան, բարախում մի սիրո, Հայաստանի ծողովդատանեսության շարժիչ լծակը: Այդ շնչառ Սևանն է էներգիա մատակարարում կենախինդ հայրենիքի հարցութափոր գործարաններին ու ֆարիկաներին, շոնչ փշում հանդ ու արոտներին, զովացնում դաշտերի ու այգիների ծարավից պապակած սրտերը: Սևանն այսօր ավտոդրոն է, զունավոր մետաղ, բազմապահի էներգարաններներ, դազգահեններ, գյուղատնտեսական մեթենաներ, միկրոգեններ, տուրբիններ, կոմպրենսորներ, պարարտանյութեր, բրուներ, հիմֆեր, պատումասա, ապակի, տեխսախիլ գործածներ, բամբակ, պահածոներ, արեամափառ մրգեր, ոսկենատիկ ծինուած արտեր: Սևանը Հայաստանի էներգմարզարիտն է, նրա հզոր սրտի բարխումը զգացվում է նրանից հարցութափոր կիումետրներ հեռավորության վրա. այդ նաև է լեռնալանջերին փարած ու լեռնահովլիտներում սփոված զյուղերն ու բաղադրելու գիշերները ողողում էներգետիկ հեղեղով և այնպիս աստղագարդում նրանց, որ նորիզնեներում երկինք ու երկիր իրար են միախառնվում և այդ բռվիչ պատկերը դիտողը դժվարանում է սահման գտնել երկնի ու երկիր միջե:

Հայ ժողովրդի հայանուն թշնամինները այսօր էլ արտասահմանում չեն դադարում վայնասում բարձրացնել այն մասին, որ իր թե խախտվել է Սևանի գեղեցկությունը. նրանք անհիմն կերպով ողբում են Սևանի մասն, նրա խսպան անհետացումը Հայաստանի ժարտեղի վրայից. նրանք դեմ են Սևանի պրորեմի իրականացմանը, նրանց ցանկությունն է, որ Սևանը հար ու հարատ անձնենմանի մնա: Սակայն, գեղեցկության այդ գնենիկ «երկրագուները», ժողովրդի այդ ժողարկած թշնամիններն ու գրաբարիշները մոռանում են, որ յարդը միշամտելով ու ողղելով բնության սխալները, ոչ թե ավերում, այլ ավելի բան բռվշությունն է հաղորդում նրա գեղեցկությանը: Ենի ծավալի փոթրացումը դեռևս նրա գեղեցկության նըլազում չի նշանակում, ընդհակառակ նա ավելի բան գեղեցիկ կլիմի, բան եղել է երբեւէ. խշուն անտառների, ալպյան բավիչ մարգագետինների կանաչ գտնին կզարդարի նրա հնգանկուն իրանը, հանգստյան բազ-

մարիկ աների պատկերները մեղմօրու կրծքան լին շինչ հայելու մեջ, էլեկտրագեացքը Արարատյան երախտապարտ դաշտի սիրազգործ ողույնը կրերի նրան ամեն օր, իսկ տասնյակ հազարամոր աշխատավորներ տոն ու կիրակի օրերին իրենց հանգիստը կլազմակերպեն նրա հյուրընկալ ափերին: Կարելի՞ է մի պահ անգամ վարանել, թե ո՞րն է արդյոք ավելի գեղեցիկը—լեռների գոգում նրանով լին արեալող հայելին, թե՝ հարցութափոր գործարանների աշխատանքային ախործ աղմուկը, արեալող ու հասուն մրգերի բեռան տակ կբած բիերի ու ծառերի կանաչ ծովը, սոկեծիուն արտերի, ձյունասպայտակ բամբակի դաշտերի օվկիանը, աստղասպիցու ցյուղերի ու բաղադրերի գիշերային դյուրիչ տեսարանը, միլիոնավոր մարդկանց երշանիկ ու բարեկեցիկ կյանքը: Սևանի կասկադի, Սևանի պրոբլեմի խիզախուն ու անօրինակ մտակացման համարձակ ու արագատեմայ իրագործուով սովորական մարդիկ ընդմիշտ փշրեցին գերված Սևանի կապահենները, խոռվեցին նրա դարավոր նիրեր և բազմապատկեցին մեր սիրատուն հայրենիքի գեղեցկություններ, էներգոգինվածություններ, հզորություններ և բարօրություններ:

Բայց Սևանը միակը չէ, որին վերապահված է խոշոր դեր խաղալ և ներանայաստանի աշխարհագրական դիմքի վերափոխման գործում: Սովետական մարդիկ գիտեն ոչ միայն նպատակահարմար փոփոխություններ մըտցընել եղած լեռերի կառուցվածքի մեջ, այլ և ստեղծել նորերը: Հայաստանի ժարտեղի վրա արգել սկսել են երես գալ նոր լճակներ ու լիներ. դրանք կառուցված ու կառուցվող մասեր ու խոշոր շամբարներն են, որոնց մեջ կան նաև հայութափոր միլիոն խորանարդ մետր շրատառողություն ունեցողներ: Մասն ու միջակ հիդրոկայանների ցանցով են սկսել պատվել Հայաստանի նաև մյուս շրվեծաշատ գետերն ու գետակները, նույնիսկ սրբած լեռնավահեններն ու ջրառատ շանցենները: Այսօր տասնյակ ցյուղեր ունեն իրենց սեփական միկրոգենները, հարցութափոր ցյուղեր գեղազարդվել են էլեկտրալուսերով, իսկ 1950 թվականին Հայաստանի բարուր ցյուղերն անխութիր համատարած էլեկտրիֆիկացման ենթակված կլինեն:

Սովետական բար արեկ տակ այսպիս է կերպարանափոխում - հայրենի աշխարհի դիմքը գերեցանիկ հայ ժողովուրդը:



Մեր ծաղկող Հայրենիքի շնչաղ մայրանպատ Երևանը

Սովետական Հայաստանի տնտեսական մեծ վերելքը հնարավորություն ընձեռնեց նրան իր գիրկն ընդունելու օտար հորիզոն-ների տակ զաղբացուալը ձեռին դեգերող իր տասնյակ հազարավոր զափակներին. արդեն հայրենիք են դարձել բազմահազար հայրե-նադարձներ, որոնք հարազան եղայրների ու ժույրերի նետ ձեռք-ձեռքի տված իրենց լուսաշող կյանքն են կերտում ու հայրենիքի վերելքին մասնակցում:

Բայց հայրենիքի դեմքը չէ միայն, որ փոխվել է այդպես, փոխվել ու փոխված է նաև այդ բնուրյանը իր հոգիու կամքը թե-լադրող ժողովուրդը: Երեմենի բազմատանջ ու բազմաշարշար հայ ժողովուրդը վերածը-վել է հոգեպես. շկան այլս արյուն ու ավեր, կեղենում ու լկում և առույգ ու տաղանդա-վոր հայ ժողովուրդը ապրում է լարյուն կյանքով ու ստեղծագործում համամիութե-նական նշանակուրյուն ունեցող արժեներ: Հայ ժողովրդի դարավոր պատմության ան-հայտ բուռն վերելք է ապրում այսօր հայ-մշակույրը, արվեստը, գրականուրյունը, գի-տուրյունը: Սովետական Միուրյան պետա-կան-հասարակական նշանավոր գործիչների, ժողովրդատնտեսուրյան առաջավորների, ա-կանավոր գիտականների, նորարարների, գրողների, արվեստագետների, նարարա-պետների, գիլելուրականների փայլուն անուն-ների շարքում իրենց պատվավոր տեղն են գրափում նաև հայ ժողովրդի լավագույն զա-վակների անունները: Հայ գրականության ընտիր երկերը բարգմանվում են բազմարիվ լեզուներով, հայ-երգը, հայ երաժշտու-րյունը հնչում է հարյուրավոր ուղինկայան-ներից, վրձինի հայ լարպետների գործե-րը ցուցադրվում են երկրի խոշորագույն պատկերարակներում:

Մոռացության են արվել դարիքի, պան-դիմության, անանոռը ու շարժաշ կյանքի վլատու ու բախծալի երգերը: Այսօր արևա-կան մեր հայրենիքի գեղեցկաշեն, էլեկտրա-լուսերով ողոված զյուղերում ու բաղավեն-րում, մեծ ու փոքր գործարաններում, լեռ-նաներների ընդերքում, նսկա նորակառուց-ների աշտարակների վրա, բերքառա դաշ-տերում, մրգառատ այգիներում, բավիշ կա-նաշով ծածկված լեռնարուսներում, բարերե-լեռնանվաններում, սաղարբախտ անտառ-ներում, զիջ լեռնալեռների ու սրճարց լեռնա-գետերի ափերին աշխատանքային ուրախ զվարք երգն է զիլ ու անույշ հնչում և նորա-նոր սիրագործությունների հրավիրում:

Այսպես է կյանքը մեր խնդրուն հայրենի- քում և նրա ամեն մի օր— դա դեպի լուսա- շող ապազան տանող սահմանի մի նոր աստիճանի ավելացում է նշանակում:

Ի տես այս ամենի, ազգիվ, ողջախոն ու հայրենասեր հայ մարդ կարո՞ղ է շուշա- խանալ, շիրճել անկեղծութեն ու շնպարտա- նալ հարազատ ժողովրդի անհայրերաց նր- փառութերով. հայ ժողովրդի երգլյալ թշնա- միները և օտարեներին վաճառված հայրենա- դաշները միայն կարող են կույր ձևանալ ու շնեսել մեր հայրենիքի այս անօրինակ բարգավաճումն ու ծաղկումը: Հայ նկեղեցին, հայ նոգերականությունը, որ իր հարազատ ժողովրդի դաժան փորձուրյունների, մեծ արհավիրքների, սարսափելի եղենների օրե- րին նրա նետ միասին հահատակվել, տանց- վել ու տառապել է, այսօր չի կարող շուշա- խանալ, շնպարտանալ նրա փառանեղ վե- րածնունդը տեսնելով: Հայ նկեղեցու դարա- վոր պատմության ընթացքում հայ հայրենա- սեր նոգերականությունը երեք օտարեն- երին չի վաճառվել ու հակադրվել իր սիրա- սուն հայրենիքին, նա միշտ եղել է, կա ու կիմի հայրենիքի նետ. նա երեք մոռացու- րյան չի մատնել հայրենիքի կենական շա- ները ու բարձր է ծածանել հայրենասիրու- րյան նվիրական դրոշը. այսօր էլ հայ- րենասեր նոգերականությունը իր հայրե- նիքի նետ է և նրան անհուն երեվանի են պատճառում հարազատ ժողովրդի խաղաղ ու բարօր կյանքը, անհայրերաց տնտեսա- կան ու կողմուրական վերելքը: Հայ նկեղե- ցու նշանաբանն է— ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ և հայ նոգերականության ողջ հասարակական գործունեությունը պետք է ընթանա այս սրբազն նշանաբանի տակ: Հայ նոգերականությունը այն հաստատ հավատն ունի, որ հայ ժողովրդի երջանկու- րյունը, նրա խաղաղ ու շինարար աշխա- տանքը, նրա լուսապայծառ պահան պայ- մանավորված է միայն ու միայն Սովետա- կան Միուրյան ժողովուրդների եղայրակ- ցության ընտանիքի գոյությամբ և այդ հզոր ընտանիքից դուրս նա խաղաղ ապրել ու բարգավանն չի կարող երեք: Հայ ժողո- վրդի բախտը սերտորեն միահյուսված է Սովետական Միուրյան ժողովուրդների բախտի նետ և ով մինչև այսօր մեկ ընդմիշտ

չի բմբնել այս ակնհայտ նշմարտուրյունը, նշանակում է նա դեռ ոչինչ չի հասկացէլ պատմության դասերից:

Այսօր, երբ սովետական ժողովուրդները, որոնց բվում և հայ ժողովուրդը, խալաղ ու ստեղծագործ աշխատանքով են զբաղված, համաշխարհային մի նոր պատերազմի անգլո-ամերիկյան երձիգեները դավեր են լարում մեր անձայրածիր հայրենիքի դեմ ու տեղագին պատերազմի նախապատրաստվում։ Այս իրադրությամբ քեավորված, վերջերս հայկական մի ժամկի զաղութերում նկատելի աշխուժություն են սկսել ցուցաբերել հայկակայաստանյան տարրերը, որոնք նպաստակարել են զաղութահայ եկեղեցին և ներգրավել իրենց հայրենադավ գործունեության շրջանակի մեջ։ Մենք լիովին փստահ ու հավատացած ենք, որ զաղութահայ հայրենասւը հոգևորականությունը, որը սրբազն պարտականություն ունի հանուն Հայ Հայրենիքի և Հայ եկեղեցու անողոք պայմար ծավալել հայրենիքի ու եկեղեցու քշնամիների դեմ, արժանի հականարկած կոտ հայրենադավների այս ենթամիտ փորձերին և զաղութահայ հայաստանյան կազմակերպությունների հետ ձեռք-ձեռքի տված անդուլ կեր-

պով կաշխատի Հայ ժողովրդի, Հայ Հայրենիքի ու Հայ եկեղեցու քշնամիներին ժողազերծ անել, որկել երանց իրենց ոտմի տակի հողից, չեզոքացնել ու մեկուսացնել։ Ամենազոյցն կասկած անգամ շուտենի, որ զաղութահայ հոգևորականությունը, անվերապահութեն բոլորվելով ծաղկուն Սովետական Հայրենիքի ու Հայաստանյայց միասնական եկեղեցու շուրջը, իր սիրազորով հայացքը միշտ հառած կպահի հայրենի լեռնաշխարհում մեծ վերելք ապրող Հայրենիքին և հայ հավատի հինավորց օջախ, նոյան տապանակիր սրբազն լեռան ստորոտում վեր խոյցած լուսավորշանիմն էջմիածնին։

Դաղուրահայ հայրենասւը հոգևորականությունը, թեկուզ և նեռավոր ու օտար երկնակամարի տակ, պիտի է ապրի, շնչի և իր հավատացյալ հոտին ապրեցնի հարազատ հայրենիքով։ Նա իր մտմի հորիզոնի վրա միշտ վեր խոյցած պիտի տեսնի հայրենի երկնական լեռների լուսաշող կատարեները և հնադարյան Ս. էջմիածնի հառազայրազոն զմբերները։ Նա շամի շաբաթ է խնայի կենսագործելու համար Հայ եկեղեցու որդեգրած նվիրական նշանարանը— ՀԱՅՄԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՈՒ ՀԱՅՄԵՆԻՔԻ ՀԵՏ

